Ցունս. 29–ին հեռագրում են Երևանից. «Կացութիւնն օր ըստ օրէ վատթարանում է, որովհետև քրդերն ու թուրքերը, առաջուայ պէս, խիստ դրդռիչ կերպով են պահում իրենց։ Հրացանագարկ են անում գնացքները։ Յարձակւում են պարենակիր խմբերի և անհատ ճամբորդների վրա։ Ներկայումս նրանք փորձում են շրջապատել Ռեհանլու գիւղը, որի շուրջը փորւում են խրամատներ։ Զօրքի և հրոսախմբերի միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ առ այժմ սպանուած են 2 սպայ և 11 զինուոր, վիրաւորուած են 7 հոգի, անհետ կորած 3։ Բնակիչներից սպանուած է 34 հոգի, վիրաւորուած՝ 10։ Շահթախթից եկող 400 ֆուրգոնոց պարենակիր խումբը Խանլուխլարի մօտ ենթարկւեց յարձակման, կան սպանուածներ և վիրաւորներ։ Քրդերն ու թուրքերն, ըստ երևոյթին, ձգտում են անդրծութեան մատնել երկաթուղին։ Այս օրերս փորձ է եղել Արարատ կայարանի մօտ կամուրջն այրելու։ Դրութիւնը երթալով բարդանում է շրջանում»։

Փետր. 2–ին մօտ 3000 զինուած թուրքեր կանգնեցրին Նորաշէնից Շահթախթ գնացող պոստատար գնացքը։ Գնացքում եղած 11 հայ զինուորները դուրս թռան վագոնից և անցնելով շոգեշարժի վրա՝ պահանջեցին առաջ շարժւել։ Զինուորների և թուրքերի միջև սկսւեց տաք հրացանաձգութիւն։ Նոյն միջոցին Ղամարլուից դէպի Նորաշէն դուրս եկաւ հայ զինուորներով բեռնաւորուած մի գնացք, որ անտեղեակ էր Նորաշէնում կատարւող դէպքին։ Նորաշէնի մօտ թուրքերն առաջ բերին գնացքի խորտակում. շոգեշարժն ու վեց վագոններ ջարդւեցին։ Թուրք խուժանը յարձակւեց երկու գնացքների վրա և սկսեց թալանել։ Եղան բազմաթիւ վիրաւորներ ու սպանուածներ։ Գնացքում եղող ռուսներին ու վրացիներին ձեռք չտւին։ Խորտակուած գնացքից թուրքերը տարին 1000 հրացան, մեծ քանակութեամբ փամփուշտ։ Գերի առնւեցին 5–600 հայեր։ Յաջորդ օրը, փետր. 3–ին հազարաւոր զինուած թուրքեր Նորաշէնում շրջապատեցին Արազդայեան կայարանից եկող № 25 մարդատար գնացքը, թալանեցին ամբողջը, կողոպտեցին կայարանի պետի գրասենեակն ու ճանապարհի վերաքննիչին և մորթոտեցին գնացքում ու կայարանում եղող բոլոր հայերին։

Փետր. 7–ին հաղորդակցութեան պետ Վեքիլովը հեռագրում է Թիֆլիս, որ ինքը Շահթախթ է եղել և վերադարձել է մեծ դժւարութեամբ՝ զինուորական գնացքի հետ։ Ճանապարհի վրա հեռագիրը չի գործում, կամուրջները քանդւած են, գիծը բռնուած է քրդերով ու թուրքերով, Ուլուխանլուում բոլոր տներն ու շինութիւնները այրւում են։

Նոյն մոայլ տեղեկութիւնները և Ալեքսանդրապոլից, փետր. 4–ին. «Զուլֆա—Երեւան գծի բոլոր գնացքներն անխտիր ենթարկւում են թալանի, հայ ճանապարհորդներին սպանում կամ մորթում են։ Թուրքերը շատ լաւ զինուած, կազմ ու պատրաստ են. Ալեքսանդրապոլից Երեւան, Նախիջեւան կամ թէ այն կողմից դէպի Ալեքսանդրապոլ ո՛չ մի գնացք չեն թողնում։ Զկայ ո՛չ մի զինուորական ոյժ, իսկ խուժանի սանձարձակութիւնը քանի գնում մեծ չափերի է հասնում։ Քաղաքում ժողովուրդը խիստ դրգռւած, յուզւած է այս բոլորի դէմ. անասելի իրարանցում է տիրում հէնց կայարանում։ Եկել են և գալիս են բազմաթիւ զինուորականներ, որոնք անցնելու են Նախիջեւան, Երեւան, բայց ճանապարհ չլինելու պատճառով մնում են կայարանում»։

Փետր. 15–ին Ալեքսանդրապոլի մօտի Մոլլա–Մուսա գիւղի բնակիչները յարձակւեցին իրենց մօտ եկող պատգամաւորութեան վրա, սպանեցին զինուորական խորհրդի ներկայացուցիչ՝ համակրելի հասարակական գործիչ Ասրիբէգեանին (սոց.–դեմ.) և ուրիշ վեց հոգու ու վիրաւորեցին վեց հոգի։ Այս դէպքը ահազին յուզում առաջ բերեց. Մոլլա–Մուսա գիւղը ենթարկւեց